Funded by the European Union

Մասնակիցների կանչ

COVID-19. Քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն

Արագ արձագանքման աջակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) և անկախ լրատվամիջոցներին

ՄԵՐ ՄԱՍԻՆ.
«COVID-19. Քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» ծրագիրը տարածաշրջանային ծրագիր է, որն իրականացվում է **Մարդու իրավունքների տուն Երևանի** ու **«Հավասար իրավունքներ և անկախ մեդիա» ֆրանսիական կազմակերպության** (ERIM, նախկինում՝ ԱՅՐԵՔՍ Եվրոպա) կողմից՝ **ԵՄ ֆինանսավորմամբ**: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, անկախ ակտիվիստներին և անկախ լրատվամիջոցներին՝ շարունակելու իրենց գործունեությունը COVID-19-ի համաճարակի ընթացքում և դրանից հետո:

Մենք փնտրում ենք փոքր և միջին ՔՀԿ-ների, անկախ ակտիվիստների և անկախ լրատվամիջոցների, որոնք տուժել են համաճարակից և որոնք աջակցության կարիք ունեն՝ իրենց աշխատանքը շարունակելու և այն կազմակերպելու համար:

ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ.

ՔՀԿ-ների համար.
Դրամաշնորհները տրամադրվում են սոցիալական և բնապահպանական ուղղվածության այն ՔՀԿ-ներին, որոնք տուժել են COVID-19-ի համաճարակից, չունեն բավարար միջոցներ՝ իրենց աշխատանքն արդյունավետորեն շարունակելու համար, սակայն ունեն ստացած դրամաշնորհի միջոցով իրենց աշխատանքը կազմակերպելու և կայուն դառնալու ներուժ:

ԼՈՏ 1. Արագ արձագանքման ինստիտուցիոնալ աջակցության դրամաշնորհներ ՔՀԿ-ներին՝ մինչև 21,000 եվրո: Դրամաշնորհը տրամադրվում է հիմնական ծախսերի և գործողությունների իրականացմանն աջակցելու նպատակով՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով դրանցով.

- ընթացիկ ծախսեր (օրինակ՝ աշխատավարձ, գրասենյակի վարձակալություն, գրասենյակային ծախսեր, անվտանգության ապահովման ծախսեր և այլն),
- ճգնաժամին հակազդելու գործողությունների իրականացման համար աջակցություն (օրինակ՝ համաճարակի ընթացքում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկում, համաճարակից տուժած խոցելի խմբերին աջակցելուն ուղղված գործողություններ),
- ճգնաժամին հակազդելու և գործողությունների պլան մշակելու համար խոհրդատվությունների և մասնագիտական խորհրդատվության համար դիմումներ:

Ծախսերը կարող են ներառել նաև նախկինում՝ 2020 թ. մարտի 20-ից հետո կատարված ծախսերը, օրինակ՝ գրասենյակի վարձավճար կամ աշխատավարձ, որոնք կատարվել համաճարակի ընթացքում:

ԼՈՏ 2. Հոգեբանական և իրավաբանական աջակցության արագ արձագանքման դրամաշնորհներ ՔՀԿ-ներում աշխատողների և նախաձեռնությունների համար. Դրամաշնորհները տրամադրվում են **մինչև 2,000 եվրո անհատներին** և **5,000 եվրո՝ խմբային հայտադիմումների դեպքում**, որոնք կարող են ուղղվել հետևյալ գործողություններին՝ չսահմանափակվելով դրանցով.

- առցանց հոգեբանական կամ իրավաբանական օգնություն,
- մասնագիտական այրումը կանխարգելող (անգլերեն՝ anti-burnout) վերապատրաստումներ/թրեյնինգներ,
- հանգիստ (անգլերեն՝ relaxation retreats):

Լոտ 3. Թվայնացման դրամաշնորհներ՝ մինչև 8,000 եվրո, որոնք տրամադրվելու են հետևյալ գործողությունների համար՝ չսահմանափակվելով դրանցով.

- Տանից կամ առցանց աշխատելու համար անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար (հեռախոսներ, համակարգիչներ, համակարգչային ծրագրեր, բաժանորդագրություններ առցանց խորհրդաժողովների ծառայություններին և այլն),
- Աշխատանքի կատարելագործման նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման շուրջ խորհրդատվություններ, ռազմավարական պլանավորում և վերապատրաստում (օրինակ՝ ինչպես անցկացնել առցանց միջոցառումներ կամ արշավներ, առցանց անվտանգություն, այդ թվում՝ կոդավորում, անվտանգ հաղորդակցություն և «թվային ինքնապաշտպանություն»),
- Շահառուների համար, այդ թվում՝ խոցելի խմբերից, գործիքների կամ ծառայությունների մշակում՝ առցանց կամ հեռավար կերպով անմիջական աջակցության տրամադրման համար (օրինակ՝ թեժ զրուցարաններ ընտանեկան բռնությունից տուժած անձանց կամ ԼԳԲՏԻ անձանց ու երիտասարդներին, թեժ գծեր վտանգի մեջ գտնվող տարիքով ավագ անձանց համար),
- ՔՀԿ-ների համար առցանց ռեսուրսների և առցանց ցանցերի (անգլերեն՝ network) ստեղծման աջակցություն,
- Աուդիո-վիզուալ տեղեկատվության արտադրություն,
- Առցանց աջակցության ծրագիր (անգլերեն՝ աութրիչ) և ֆոնդահայթայթում,
- նախագծայինից (անգլերեն՝ project-based) ծրագրային (անգլերեն՝ programme-based) ֆինանսավորման անցման քոուչինգ և առաջնորդություն:

Անկախ լրատվամիջոցներին և ՔՀԿ-ներին.
Դրամաշնորհները տրամադրվում են COVID-19-ի համաճարակից ազդված անկախ լրատվամիջոցներին և ՔՀԿ-ներին, որոնք զբաղված են փաստերի ստուգմամբ և հակազդող պատումների ներկայացմամբ:

Լոտ 4. Արագ արձագանքման ինստիտուցիոնալ աջակցություն լրատվամիջոցներին և ՔՀԿ-ներին՝ մինչև 10,000 եվրո՝ մարզային և մինչև 19,000 Եվրո՝ համապետական լրատվամիջոցներին: Դրամաշնորհը տրամադրվում է հետևյալ գործողությունների իրականացման համար՝ չսահմանափակվելով դրանցով.

- ընթացիկ ծախսեր (օրինակ՝ աշխատավարձ, գրասենյակի վարձակալություն, գրասենյակային ծախսեր, անվտանգությանն առնչվող ծախսեր և այլն),
- հատուկ գործողությունների իրականացման համար աջակցություն՝ ի հակազդեցություն ճգնաժամին (օրինակ՝ համաճարակի ընթացքում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկում, համաճարակից ազդված՝ խոցելի խմբերին օգնելուն ուղղված գործողություններ),
- Ճգնաժամին հակազդելու և գործողությունների պլան մշակելու համար խոհրդատվությունների և մասնագիտական խորհրդատվության համար դիմումներ:

Լոտ 5. Կարողությունների զարգացման դրամաշնորհներ՝ մինչև 5,000 Եվրո կարողությունների զարգացման կարճաժամկետ ծրագրերի (այդ թվում՝ փաստաթղթերի մշակման) համար և մինչև 12,000 Եվրո՝ երկարաժամկետ՝ մենթորության բաղադրիչով, ծրագրերի համար: Դրամաշնորհները պետք է ուղղված լինեն ստորև նշված մեկ կամ մի քանի կարողությունների զարգացմանը (փաստաթղթերի կազմմանը)՝ չսահմանափակվելով դրանցով.

- ֆոնդահայթայթում.
- արշավներ և ջատագովություն.
- առցանց անվտանգություն.
- ռազմավարական պլանավորում.
- ֆինանսներ և կառավարում/ղեկավարում.
- հաղորդակցություն
- մարդկային ռեսուրսների կառավարում:

Լոտ 6. Մեդիա արշավների դրամաշնորհներ լրատվամիջոցներին և ՔՀԿ-ներին՝ մինչև 7,000 Եվրո: Ապատեղեկատվության դեմ պայքարի գործում ՔՀԿ-ներին ու լրատվամիջոցներին աջակցելու նպատակով տրամադրվում են դրամաշնորհներ՝ մեդիա արշավների, ջատագովության և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների/գործողությունների իրականացման համար: Դրամաշնորհները, մասնավորապես, պետք է ուղղված լինեն առողջությանն սպառնացող ռիսկերի, իշխանությունների գործողությունների վերաբերյալ ապատեղեկատվության դեմ պայքարին, ինչպես նաև խտրականացվող կամ խոցելի խմբերի պաշտպանությանը:

Այդպիսի ծրագրերի օրինակներ են.

- COVID-19-ի համաճարակի դեմ պատվաստման, ինչպես նաև համաճարակով պայմանավորված առողջությանն սպառնացող վտանգների, իշխանությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների ու սահմանափակումների վերաբերյալ անաչառ տեղեկատվության, ինչպես նաև հակազդող պատումների ներկայացումը.
- Իրավապաշտպանների, նրանց կոչման ու առաքելության վերաբերյալ անաչառ տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև իրավապաշտպանների դերի ու տեսանելիության բարձրացումն ու ջատագովությունը:

Բոլոր դրամաշնորհներով առավելապես խրախուսվում են մարզերից ստացված հայտադիմումները՝ նախապատվությունը տալով այն կազմակերպություններին, որոնք նախկինում սույն աղբյուրից աջակցություն չեն ստացել:
Քաղաքական և կրոնական կազմակերպությունների հայտադիմումները քննարկման ենթակա չեն:

Աջակցությունը կարող է տրամադրվել մինչև 24 ամիս ժամկետով:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ.

Մասնակիցները պետք է ներկայացնեն համապատասխան հայտադիմումի ձևը հայերեն՝ info@hrhyerevan.org էլ. փոստի հասցեով՝ «Վերնագիր» հատվածում նշելով ստորև նշված համապատասխան լոտի անունը.

Լոտ 1. Արագ արձագանքման դրամաշնորհներ ՔՀԿ-ներին

Լոտ 2. Հոգեբանական և իրավաբանական աջակցության արագ արձագանքման դրամաշնորհներ

Լոտ 3. Թվայնացման դրամաշնորհներ

Լոտ 4. Ապատեղեկատվությանը հակազդելու արագ արձագանքման դրամաշնորհներ

Լոտ 5. Կարողությունների զարգացման դրամաշնորհներ

Լոտ 6. Մեդիա արշավների դրամաշնորհներ

Դրամաշնորհների մրցույթները հայտարարվելու են շարունակական հիմունքներով: Այս փուլի համար հայտադիմումները պետք է ներկայացվեն մինչև **2021 թ. հոկտեմբերի 15-ը:**

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ.

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ «Մասնակիցների ուղեցույցը»: